# Դաս 27. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և սուրբ Մեսրոպ Մաշտոց



Արիստակես հայրապետ

- *Գրիգոր Լուսավորիչը ունեցել է երկու զավակ՝ Վրթանեսը ու Արիստակեսը, ովքեր հետագայում դարձել են հայոց կաթողիկոսներ: Նրանցից առաջինը կաթողիկոս է դարձել: Նախ կաթողիկոս է դարձել կրտսեր որդին՝ Արիստակեսը, որի ապանությունից հետո ավագը՝ Վրթանեսը: Պահպանվել է մի հետաքրքիր պատմություն՝ կապված Արիստակես կաթողիկոսի հետ: Նիկիա եկեղեցական ժողովին մասնակցելու ժամանակ արիոսականները (քրիստոնության ուղղություն), տեսնելով Արիստակեսի նիհար և ճգնություններից հյուծված կերպարանքը, ծաղրեցին նրան՝ ասելով, որ նա ավելի շատ մշակի է նման, քան Հայրապետի, և հեգնելով առաջարկեցին, որ դիմացի արորադիր եզները վերցնի և ծովը հերկի: Արիստակեսն առանց վարանելու ընդունեց առաջարկը և հերկեց ծովը՝ իբրև հաստատ գետին: Վերադարձին նա իրեն ծաղրողներին ասաց.*

  *«Եթե դուք ալ ուղիղ հաւատք ունիք՝ գացէք հերկերուն վրայ սերմ ցանեցէք» (եթե դուք էլ ուղիղ հավատք ունեք՝ գնացեք և այդ հերկերի վրա սերմ ցանեցեք):*